ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅԻԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 19 - 20 (16317) ՇԱԲԱԹ, 21 ՄԱՐՏԻ 2015 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

«ՈՒԺԵՂ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ, ՈՒԺԵՂ ՎՐԱՍՏԱՆ»

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻՈՒՄ

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու նախաձեռնությամբ, երկրի տարածաշրջանների ռազմավարական եւ տնտեսական զարգացման համար մեկնարկեց «Ուժեղ տարածաշրջան, ուժեղ Վրաստան» նոր նախագիծը: Միջոցառմանը մասնակցել են կառավարության անդամներ, գործարարներ եւ տեղի իշխանությունների ներկայացուցիչներ:

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻՆ՝ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿՈՆԿՐԵՏ ԾՐԱԳԻՐ

Նախագիծը կողմնորոշված է տարածաշրջանների տնտեսական առաջընթացի, քաղաքների աշխուժացմանը, արտադրությունների գործարկմանը, մարդկանց աշխատանքով ապահովելուն եւ քաղաքացիների նյութական վիճակի բարելավմանը:

«Կրկին անգամ կոչ եմ անում ներգրավվել կառավարության կողմից ներկայացված նոր նախագծին, ավանդ ներդրեք տարածաշրջանի հզորացման գործում, ինչը մեր պետության հզորության նախապայմանն է: Ես հավատում եմ ձեր հայրենասիրությանը,

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

«ԱՐԱՐԱՏԻ ՍՏՈՐՈՏԻՆ» ՄԵԴԻԱ ՀԱՄԱԺՈՂՈՎ

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ. «ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՄԵՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽԱՐՍԽՎԱԾ ԵՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՄՔԻ ՎՐԱ»

«ԱՐԱՐԱՏԻ ՍՏՈՐՈՏԻՆ» 5-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԵԴԻԱ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Մարտի 18-20-ին Երեւանում անցկացվեց «Արարատի ստորոտին» 5-րդ միջազգային եռօրյա մեդիա խորհրդաժողովը: Խորհրդաժողովը անցկացվեց «Հիշում եմ եւ պահանջում» խորագրի ներքո: Թեմատիկ ուղղություններն այն չորս սկզբունքներն են՝ Հիշողություն, Երախտագիտություն, Միջազգային պայքար ցեղասպանությունների ճանաչման համար, Վերածնունդ, որոնց տրամաբանության ներքո անցկացվում են Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի ոգեկոչման միջոցառումները:

Համաժողովին իր ելույթում Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, անդրադառնալով հարեւան երկրների հետ հարաբերությունների հարցին, մասնավորապես, նշեց.

«Գոհունակությամբ պետք է փաստեմ, որ վերջին տարիներին տեսանելիորեն աշխուժացել են հայ-վրացական բարձր մակարդակի շփումները: Ավանդական բարեկամության, հարեւանության եւ մեր ժողովուրդների միջեւ փոխըմբռնման պատմական հենքի վրա խարսխված ակտիվ միջպետական երկխոսությունը լուրջ նախադրյալներ է ստեղծում գործընկերության նորանոր ուղղություններ նախանշելու համար: Արդյունքում մենք ձեռք ենք բերում երկկողմ օրակարգի արդիական հարցերի օպերատիվ կարգավորման արդյունավետ մեխանիզմներ:

Մշտապես կարեւորում ենք Վրաստանի դերը ոչ միայն երկկողմ հարաբերությունների զարգացման, այլեւ Հարավային Կովկասում տարածաշրջանային անվտանգության ամրապնդման եւ պահպանման գործում: Մեր քաղաքական համագործակցության մակարդակը նպաստավոր պայմաններ է ապահովել երկկողմ տնտեսական համագործակցության զարգացման համար, որի խթանմանն ուղղված իրավապայմանագրային բազայի զարգացման գործում նշանակալի ձեռքբերումներ ենք արձանագրել»:

Անդրադառնալով Հայաստանում իրականացվող բարեփոխումների, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի, Լեռնային Ղարաբաղի հակամարտության, երկրի արտաքին եւ ներքին քաղաքական առաջնահերթությունների թեմային Հայաստանի նախագահն իր խոսքում, մասնավորապես, ասաց. «Ողջունում եմ Ձեզ Հայաստանի Հանրապետությունում՝ այս կարեւոր եւ մասշտաբային միջոցառման շրջանակներում: Աշխարհի տարբեր անկյուններից 150 անվանի լրագրողների ներկայությունն արդեն իսկ խոսում է այս համաժողովի նկատմամբ միջազգային հանրության ուշադրության, ինչպես նաեւ Հայաստանի հանդեպ ունեցած հետաքրքրության մասին:

Այսօր մեկ հարկի տակ է հավաքվել միջազգային լրատվամիջոցների խիստ ներկայացուցչական մի կազմ, որն արդեն իսկ ձեւավորել է Հայոց ցեղասպանությանն առնչվող քննարկումների արդյունավետ մեդիա հարթակ՝ միտված եւս մեկ անգամ վեր հանելու 20-րդ դարի մեծագույն հանցագործություններից մեկի հետ կապված իրողությունները: Այս համաժողովը, ինչու չէ, նաեւ յուրօրինակ հարթակ է առավել հանգամանալից եւ համակողմանի ներկայացնելու տարբեր ոլորտներում Հայաստանի ձեռքբերումներն ու մեր երկրի առջեւ ծառացած մարտահրավերները:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ԱՅՑ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԿԱՐՍՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԵՑ ՏՐԱՆՍԱՏԼԱՆՏՅԱՆ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԻ ՀԻՄՆԱՔԱՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, Թուրքիայի նախագահի հրավերով, աշխատանքային այցով գտնվում էր Կարս քաղաքում, որտեղ Թուրքիայի եւ Ադրբեջանի նախագահների հետ մասնակցեց տրանսատլանտյան բնական գազամուղի (TANAP) հիմնաքարի տեղադրման արարողությանը:

Գիորգի Մարգվելաշվիլին՝ Թուրքիայի եւ Ադրբեջանի նախագահներ Ռեջեբ Թայիբ Էրդողանի եւ Իլհամ Ալիեւի հետ մասնակցեց գազամուղի հիմնաքարի տեղադրման արարողության շրջանակներում անցկացված մշակութային միջոցառումներին:

Այցի շրջանակներում՝ Վրաստանի նախագահը հանդիպում ունեցավ նաեւ Թուրքիայի Կովկասի համալսարանի վրաց լեզվի եւ գրականության ֆակուլտետի ուսանողների հետ:

ՎՐԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ԵՎՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Մարտի 18-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու ղեկավարությամբ, անցկացվեց եվրաինտեգրման հարցերով պետական հանձնաժողովի նիստը, որտեղ ներկայացվեց 2014 թվականին եվրաինտեգրման ուղղությամբ իրականացված գործունեությունը:

Հանձնաժողովի անդամները քննարկեցին Եվրամիության հետ այցեգրերի ազատականացման ուղղությամբ գործողությունների երկրորդ փուլի իրականացման ընթացքը եւ այդ ուղղությամբ ծրագրված միջոցառումները:

Եվրաինտեգրման հարցերով պետնախարար Դավիթ Բաքրաձեն, վարչապետին ներկայացրեց տեղեկատվություն 2015 թվականի առաջին երկու ամիսների ընթացքում ասոցիացման համաձայնագրով նախատեսված գործողությունների ազգային ծրագրի իրականացման ընթացքը: Նիստում քննարկեցին նաեւ 2014-2017 թվականների համար եվրաինտեգրման ուղղությամբ, հաղորդակցության եւ տեղեկատվության վերաբերյալ Վրաստանի կառավարության ռազմավարության հետ առնչվող հարցեր:

Ուշադրություն բեւեռվեց նաեւ Ռիգայում անցկացվելիք գագաթաժողովի նախապատրաստության ընթացքի վրա:

ԱՅՑԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԻ ԴՅՈՒՐԱՑՈՒՄԸ ԿԱԽՎԱԾ Է ՎՐԱՍՏԱՆԻՑ

Ընթացիկ տարվա մայիսին, Ռիգայում անցկացվելիք արեւելյան գործընկերության գագաթաժողովում Եվրամիության հետ Վրաստանի այցեգրային պայմանակարգի դյուրացման մասին որոշումը, լրիվությամբ կախված է այն առաջընթացից, որին Թբիլիսին կհասնի այդ ոլորտում:

Այդ մասին Եվրամիության արտաքին գործերի նախարարների մակարդակով անցկացված խորհրդի նիստի ավարտից հետո հայտարարեց կազմակերպության արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության գերագույն ներկայացուցիչ Ֆրեդերիկա Մոգերինին: «Այդ հարցը կկարգավորվի, ելնելով իրականացված աշխատանքներից: Եվրահանձնաժողովը կներկայացնի իր գնահատականը այցեգրային պայմանակարգի դյուրացման ուղղությամբ, Վրաստանում իրականացված աշխատանքների առաջընթացով: Այդ հարցը կլուծվի, ելնելով եվրահանձնաժողովի տրված գնահատականից»,- հայտարարեց նա:

ՆՇԱՆԱԿՈՒՄ

ՆԻՆՈ ԳՎԵՆԵՏԱՁԵՆ՝ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Մարտի 20-ին Վրաստանի խորհրդարանը լիագումար նիստում միաձայն պաշտպանեց երկրի Գերագույն դատարանի պաշտոնում Նինո Գվենետաձեի թեկնածությունը: Երկրի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու կողմից առաջադրված Գվենետաձեի թեկնածության օգտին քվեարկեցին 88 պատգամավորներ: Ընդդիմադիր կուսակցության «Ազգային շարժման» պատգամավորները քվեարկությանը չմասնակցեցին:

Նինո Գվենետաձեն 51 տարեկան է, Վրաց-Ամերիկյան համալսարանի, Թբիլիսիի պետհամալսարանի պրոֆեսոր: Մինչեւ 2006 թվականը եղել է Վրաստանի Գերագույն դատարանի անդամ: «Հանրապետական կուսակցության» անդամ էր:

Նշենք, որ 2005 թվականի փետրվարից մինչեւ 2015 թվականի փետրվարը Գերագույն դատարանը գլխավորում էր Կոնստանտինե Կուբլաշվիլին:

ՏԵՍԱԿԵՏ

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ԼԱՎ ԿԼԻՆԻ, ԵԹԵ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԱԽԱԳԱՀԸ ԿԻՆ ԼԻՆԻ»

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հայտարարեց, որ «լավ կլինի, եթե Վրաստանի հինգերորդ նախագահը կին լինի»:

Այդ մասին Գիորգի Մարգվելաշվիլին հայտարարեց «Radisson» հյուրանոցում, որտեղ տեղի ունեցավ բարձր մակարդակի հանդիպում՝ նվիրված քաղաքական գործընթացներին կանանց մասնակցության հարցերին: Նրա իսկ խոսքով՝ «կանայք մեր հասարակության շատ ակտիվ մասն են: Կանանց բաժին են ընկել դրամատիկ բազմաթիվ գործընթացներ: Կանայք շատ ակտիվ են գիտության մեջ, արվեստի բնագավառում: Եվ այն, որ դա դեռ չի արտացոլվել քաղաքականության մեջ, կարելի է շտկել»:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ Է ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ

Վրաստանի ֆինանսների նախարարությունը ձեռնամուխ է եղել վարչական ծախսերի նվազեցման կապակցությամբ բյուջետային կազմակերպություններից ստացված հաշվարկների ուսումնասիրությանը: Այդ մասին հաղորդել է ֆինանսների գերատեսչության ղեկավար Նոդար Խադուրին:

Հիշեցնենք, որ դեռեւս մարտի 5-ին Վրաստանի կառավարությունն ընդունել էր որոշում վարչական ծախսերի նվազեցման մասին: Երկրի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու հանձնարարությամբ, պետական գերատեսչությունները, մինչեւ մարտի 16-ը, ֆինանսների նախարարությանը ներկայացնելու էին այդ ուղղությամբ «իրենց գործողության ծրագիրը»:

«Արդեն ավարտվել է նախարարություններից տեղեկատվության ստացումը, ներկայումս ընթանում է այդ տեղեկատվության ուսումնասիրությունը: Ողջ պատասխանատվությամբ կարող ենք ասել, որ կրճատումները չեն առնչվի սոցիալական եւ ենթակառույցային նախագծերին»,- հայտարարեց Նոդար Խադուրին:

Նախարարի խոսքերով, ֆինանսների գերատեսչությունը միջոցների տնտեսում է իրականացնում տարբեր ուղղություններով: Կառավարության հանձնարարությամբ, այս տարի նվազագույնի են հասցվելու վարչական շենքերի վերանորոգման ծախսերը, կահույքի, ավտոտրանսպորտային միջոցների գնումները, 30 տոկոսով կրճատվելու են վառելանյութի ծախսերը: Բացի այդ, նվազագույնի են հասցվելու գործուղումները, 20 տոկոսով նվազեցվելու են, այսպես կոչված, ներկայացուցչական ծախսերը, իսկ ուսումնական արձակուրդները կօգտագործվեն միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում:

Կառավարությունը վարչական ծախսերի նվազեցման պահանջով դիմել է նաեւ այն բյուջետային կազմակերպություններին, որոնք գործադիր իշխանության ենթակայության ներքո չեն գտնվում: Դրանք են խորհրդարանը, դատարանը, մունիցիպալիտետները, Թբիլիսիի քաղաքապետարանն ու Աջարիայի ինքնավար հանրապետությունը:

ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ

ՈՉ ԼԵԳԻՏԻՄ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ՑԽԻՆՎԱԼԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՄԻՋԵՎ

Մարտի 18-ին Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը եւ Հարավային Օսեթիայի ինքնահռչակ հանրապետության նախագահ Լեոնիդ Թիբիլովը Կրեմլում պայմանագիր են ստորագրել դաշնակցության եւ ինտեգրացման մասին:

Պայմանագիրը, մասնավորապես, նախատեսում է երկու երկրների կողմից պաշտպանության եւ անվտանգության ընդհանուր տարածքի ստեղծում, ռուս-հարավօսական սահմանի ազատ անցում, մաքսային մարմինների ինտեգրացում, ներքին գործերի մարմինների համագործակցություն, Ռուսաստանի քաղաքացիության ձեռքբերման ընթացակարգի դյուրացում եւ սոցիալական բաղադրիչ, ներառյալ կենսաթոշակների հարցերը: Փաստաթուղթը բազային է սոցիալական, տնտեսական եւ հումանիտար ոլորտներում, ինչպես նաեւ արտաքին քաղաքականության, պաշտպանության եւ անվտանգության հարցերում ՌԴ-ի եւ Հարավային Օսեթիայի միջեւ փուլառփուլ ավելի սերտ համագործակցության հաստատման համար՝ պահպանելով հանդերձ Հարավային Օսեթիայի պետական ինքնիշխանությունը: Պայմանագիրը կնքվել է 25 տարով՝ տասնամյա ժամկետով երկարացնելու հնարավորությամբ:

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԲՌՆԱԶԱՎԹՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՔԱՅԼ Է»

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգելաշվիլին խոր մտահոգություն է հայտնել Ռուսաստանի եւ Ցխինվալի տարածաշրջանի միջեւ, այսպես կոչված դաշնակցային եւ ինտեգրման մասին պայմանագրի ստորագրման առնչությամբ: «Այդ քայլն ուղղված է ինքնիշխան պետության տարածքային ամբողջականության դեմ, է'լ ավելի է ծանրացնում ստեղծված իրավիճակը եւ այն հասցնում բռնազավթման մակարդակի: Ցավալի է, որ իրավիճակի կարգավորման խելամիտ ուղիների որոնմանն ուղղված Վրաստանի ջանքերը, Ռուսաստանը պատասխանում է ապակայունացնող գործողություններով, ինչը հիմնախնդիրներ է առաջացնում բանակցային գործընթացին եւ ծայրաստիճան լարում իրավիճակը:

Դիմում եմ միջազգային հանրությանը, միավորել մեր ջանքերը ինքնիշխան պետության տարածքների բռնազավթման կանխման համար»,- ասված է Վրաստանի նախագահի կողմից տարածած հայտարարության մեջ:

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ՑԽԻՆՎԱԼԻԻ ՄԻՋԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԱՆՕՐԻՆԱԿԱՆ Է»

Ռուսաստանի եւ Վրաստանի բռնազավթված տարածքի միջեւ պայմանագրի ստորագրման փաստը դատապարտեց նաեւ Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին: Վարչապետի տարածած հայտարարության մեջ նշված է, որ պայմանագրի ստորագրումը եւս մի քայլ է Վրաստանի տարածքի բռնազավթման ուղղությամբ: «Մենք ցավում ենք, որ Ռուսաստանն այսպես է պատասխանում տարածաշրջանում կայունության պահպանմանն ուղղված մեր բազմակի քայլերին: Միանշանակ բացասաբար եմ գնահատում Վրաստանի բռնազավթված տարածքի եւ Ռուսաստանի միջեւ ստորագրած անօրինական պայմանագիրը: Միջազգային հանրությունը դատապարտել եւ բացասական գնահատական է տվել նախ՝ Աբխազիայի, ապա Ցխինվալիի հետ, այսպես կոչված դաշնակցության եւ ինտեգրման պայմանագրի ստորագրման փաստը»,- ասված է վարչապետի հայտարարության մեջ:

«ՍՏՈՐԱԳՐԱԾ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՉԻ ՀԱՄԱՐՎՈՒՄ»

ԱՄՆ պետդեպարտամենտի ներկայացուցիչ Ջեն Փսակին հայտարարել է, որ Միացյալ Նահանգները չեն ճանաչում Ռուսաստանի եւ Հարավային Օսեթիայի միջեւ կնքված՝ դաշնակցության եւ ինտեգրացիայի մասին, պայմանագրի օրինականությունը:

«Միացյալ Նահանգները չեն ճանաչում Ռուսաստանի եւ Վրաստանի բռնազավթված տարածքի՝ Հարավային Օսեթիայի միջեւ ստորագրած, այսպես կոչված պայմանագրի լիգիտիմությունը: Ոչ տվյալ պայմանագիրը, ոչ էլ 2014 թվականի նոյեմբերին Աբխազիայի հետ ստորագրած նման պայմանագիրը միջազգային պայմանագիր համարվել չեն կարող»,- հայտարարեց Փսակին եւ հավելեց, որ ԱՄՆ շարունակում է Աբխազիան եւ Հարավային Օսեթիան համարել Վրաստանի անկապտելի մասը:

ԱԲԽԱԶԻԱՅԻ ԴԵ-ՖԱԿՏՈ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՊԱՇՏՈՆԱԹՈՂ Է ԵՂԵԼ

Աբխազիայի ինքնահռչակ հանրապետության դե-ֆակտո վարչապետ Բեսլան Բութբան պաշտոնաթող է եղել:

«Ես այսօր Աբխազիայի նախագահին հայտարարել եմ իմ պաշտոնաթողության մասին»,- մարտի 16-ին հայտնել է Բութբան, նշելով, որ հայտարարությունն արել է բանավոր:

«Վերջին ժամանակներս ինձ, որպես վարչապետի, մեկուսացրել են գործերի մեծ մասից: Նախագահի վարչակազմում փաստորեն ստեղծվել է երկրորդ կառավարություն: Ես չեմ պատրաստվում պարզապես իմ տեղն զբաղեցնել»,- ընդգծել է նա:

Դրա հետ մեկտեղ Բեսլան Բութբան ընդգծել է, որ «Աբխազիայի նախագահ Ռաուլ Խաջիմբան դեռեւս չի ընդունել իր հրաժարականը»:

Նշենք, որ 54-ամյա Բեսլան Բութբան ինքնահռչակ Աբխազիայի հանրապետության վարչապետի պաշտոնը զբաղեցնում էր 2014 թվականից:



ՈՒԿՐԱԻՆԱ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԽՆԴՐԱՆՔ՝ ԽԱՂԱՂԱՊԱՀՆԵՐ ՄՏՑՆԵԼՈՒ ՀԱՐՑՈՎ

Եվրամիությանն առընթեր Եվրամիության ներկայացուցչությունը պաշտոնապես դիմել է ԵՄ-ի խորհրդին՝ Ուկրաինայի արեւելքում խաղաղապահներ մտցնելու խնդրանքով:

Մարտի 17-ին Գերագույն ռադան ընդունել է դիմում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին եւ Եվրամիության խորհրդին, որում խնդրվում է խաղաղապահներ մտցնել Ուկրաինա: Փաստաթուղթը խորհրդարանի քննարկմանը ներկայացրել էր Ուկրաինայի նախագահ Պյոտր Պորոշենկոն:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ ԿՊԱՀՊԱՆՎԵՆ

Եվրամիության ղեկավարները համաձայնել են Ռուսաստանի դեմ սահմանված պատժամիջոցները պահպանել մինչեւ Մինսկի համաձայնությունների ամբողջական կատարումը: Այդ մասին հայտարարել է Եվրախորհրդի նախագահ Դոնալդ Տուսկը:

Դրա հետ մեկտեղ Բրյուսելում ընթացող գագաթաժողովի մասնակիցները առանձին որոշում չեն ընդունել այն բանից հետո պատժամիջոցների երկարաձգման մասին, երբ հուլիսին կավարտվի դրանց գործողությունը:

Եզրափակիչ հայտարարության մեջ ընդգծվում է, որ Եվրախորհուրդը պատրաստ է «անհրաժեշտության դեպքում ձեռնարկել լրացուցիչ միջոցներ»:

ՄԱԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՔՆՆԱՐԿԵԼ Է ՂՐԻՄԻ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամները՝ Ղրիմում մարդու իրավունքների հետ կապված իրադրությունը եւ ղրիմցի թաթարների վիճակը քննարկել են Ուկրաինայի Գերագույն ռադայի պատգամավոր եւ Ղրիմի թաթարների մեջլիսի նախկին ղեկավար Մուստաֆա Ջեմիլյովի հետ:

Հանդիպումը տեղի է ունեցել փակ ձեւաչափով՝ այսպես կոչված Արիա բանաձեւով: Այդ ձեւաչափը նախատեսում է կոնսուլտացիաներ, որոնց կարող են հրավիրվել ոչ միայն դիվանագետներ, այլեւ ոչ կառավարական կազմակերպությունների եւ հասարակայնության ներկայացուցիչներ: Կոնսուլտացիաների անցկացումը նախաձեռնել էր Լիտվան: Ռուսաստանը հրաժարվել է մասնակցել նիստին՝ այն որակելով «հակաարդյունավետ եւ սադրիչ»:

ԹՈՒՆԻՍ ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԱԿՏ. ԿԱՆ ՁՈՀԵՐ

Մարտի 18-ին քաղաքացիական հագուստով երեք ահաբեկիչներ ներխուժել են Բարդոյի թանգարան եւ կրակ բացել ավտոբուսից դուրս եկող զբոսաշրջիկների վրա: Բացի այդ՝ նրանք գերի էին վերցրել 40 զբոսաշրջիկների, որոնց թվում էին իսպանացիներ, ֆրանսիացիներ, իտալացիներ ու բրիտանացիներ:

Թունիսի իրավապահ ուժերը Բարդոյի թանգարանից պատանդներին ազատելու հատուկ գործողություն են անցկացրել: «Ահաբեկիչների հարձակման հետեւանքով զոհվել է 20 մարդ, որոնցից 17-ը զբոսաշրջիկներ են, 1-ը՝ ոստիկան: Հատուկ ջոկատին հաջողվել է ոչնչացնել 2 ահաբեկչի»,- հայտնել է Թունիսի վարչապետ Հաբիբ աս Սիդը:

Ֆրանսիան եւ ԱՄՆ-ը հաստատել են իրենց քաղաքացիների սպանվելու փաստը:

Թունիսի «Բարդո» թանգարանի վրա ահաբեկչական հարձակումն իրականացրել են «Ալ Քաիդա»-ի հետ կապված «Օկբա իբն Նաֆաա» խմբավորման ապստամբները: Արդեն հայտնի է սպանված ահաբեկիչների ինքնությունը:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՎՐԱՍՏԱՆ-ՆԱՏՕ

ՀԱՍՏԱՏՎԵՑ ԱԼՅԱՆՍԻՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱԶԳԱՅԻՆ ՇՐԱԳԻՐԸ

Մարտի 19-ին ՆԱՏՕ-ին Վրաստանի ինտեգրման պետական հանձնաժողովը իր նիստում հաստատեց ալյանսին ինտեգրման 2015 թվականի ամենամյա ազգային ծրագիրը (ANP-Annual National Programme): Եվրոպական եւ եվրատլանտյան կառույցներին ինտեգրման հարցերով պետնախարար Դավիթ Բաքրաձեի նախագահությամբ անցկացված նիստին ներկա էին ծրագրի մշակմանը մասնակից պետական բոլոր գերատեսչությունների ներկայացուցիչները:

Ինչպես նշեցին պետնախարարի աշխատակազմում, հաստատված փաստաթուղթը ներկայացվելու է վարչապետի ստորագրմանը, որից հետո այն քննարկվելու է Վրաստան-ՆԱՏՕ հանձնաժողովի, ընթացիկ տարվա ապրիլին ծրագրված նիստում:

Նշենք, որ ալյանսին ինտեգրվելու ծրագրի շրջանակներում, ՆԱՏՕ-ի ներկայացուցիչները ժամանել են Վրաստան՝ գնահատելու վարժական կենտրոնի ստեղծման համար անհրաժեշտ ենթակառուցվածքները:

Վրաստանում վարժական կենտրոնի բացումը պլանավորված է ՆԱՏՕ-ին անդամակցելու ձգտմանը աջակցող միջոցառումների փաթեթի շրջանակներում, որը 2014 թվականի սեպտեմբերին հաստատվել է դաշինքի ուելսյան գագաթաժողովի ընթացքում: Կենտրոնում պատրաստություն կանցնեն դաշինքի եւ ՆԱՏՕ-ի գործընկեր երկրների զինծառայողները:

Այցի շրջանակներում՝ ՆԱՏՕ-ի ներկայացուցիչները եղան Թբիլիսիի մերձակա Վազիանիի ռազմակայանում, ինչպես նաեւ «Կրծանիսի» (Քվեմո Քարթլիի տարածաշրջան) Ազգային ուսումնական կենտրոնում: Համապատասխան եզրակացության հիման վրա կորոշվի կենտրոնի գտնվելու վայրը, ինչպես նաեւ հանձնարարականներ կմշակվեն նախագծի ֆինանսական կողմի վերաբերյալ:

Որպես կենտրոնի ենթադրվող վայր՝ ավելի վաղ քննարկվում էր Վազիանիի ռազմակայանը, ուր ընթացիկ տարվա հունվարին այցելել էր ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ Ալեքսանդր Վերշբոուն: Նա հետեւել էր ցուցադրական զորավարժություններին եւ բարձր գնահատական տվել վրացի զինվորականների պատրաստվածությանը:

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԿԱՊԵՐ

ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մարտի 16-ին Արեւելյան գործընկերության խորհրդարանական ասամբլեային՝ եվրոնեստի լիագումար նիստի աշխատանքին մասնակցելու համար, Երեւան մեկնեց Վրաստանի խորհրդարանական պատվիրակությունը՝ Վիկտոր Դոլիձեի գլխավորությամբ:

Այցի շրջանակներում՝ վրաց խորհրդարանականները Հայաստանի եւ Ուկրաինայի պատվիրակությունների հետ անցկացրին աշխատանքային հանդիպում, ապա՝ մասնակցեցին եվրոնեստի լիագումար նիստին:

Վրաստանի խորհրդարանի պատգամավորները մասնակցեցին նաեւ Եվրամիությանը մերձենալու տնտեսական ինտեգրացիայի օրենսդրության, քաղաքական հարցերի, Մարդու իրավունքների եւ ժողովրդավարության, էներգաապահովության եւ սոցիալական հարցերի մշակույթի, կրթության եւ քաղաքացիական հասարակության կոմիտեների նիստերին:

Հանդիպումներում Վիկտոր Դոլիձեն ներկայացրեց «2014-2020 թվականներին Եվրամիության երկրների հետ համագործակցության եւ Արեւելյան գործընկերության շրջանակներում եվրոպական հարեւանության քաղաքականության առավել ակտիվ ներգրավվածության մասին» հռչակագրի նախագիծը:

Վրաց խորհրդարանականներն այցելեցին Հայոց ցեղասպանության Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, ծաղկեպսակ դրեցին, եղան Հայոց ցեղասպանության թանգարանում:

ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԱՆՑՎԵԼ Է ԱՎԵԼԻ ՔԱՆ 40 ՀԱԶԱՐ ԴԻՄՈՐԴ

Ավարտվեց միասնական ազգային քննությունների, մագիստրոսի քննությունների եւ դրամաշնորհային մրցույթների համար դիմորդների գրանցումը:

Քննությունների ազգային կենտրոնի տվյալներով, ներկա դրությամբ, քննությունների համար գրանցվել է 40 հազար դիմորդ, շուրջ 4 հազարը գրանցում են անցել դրամաշնորհային մրցման, իսկ 12500-ը՝ մագիստրոսի քննություններին մասնակցելու համար:

Ինչպես հայտարարեցին կենտրոնում, առաջիկա մի քանի ամիսներին դիմորդները կունենան գրանցման թերթիկում նշված բուհերն ու ծրագրերը փոխելու իրավունք:

Նշենք, որ այս տարի միասնական ազգային քննությունների առարկաների թվին ավելացվել է քաղաքացիական կրթությունը, նորամուծություն է ներդրվել նաեւ աշխարհագրության առարկայի քննության մեջ՝ թեստավորման ժամկետը 3-ից նվազեցվել է մինչեւ 2,5 ժամ: Առավելագույն միավորը 70-ի փոխարեն կազմում է 60-ը, իսկ պատմության քննության առավելագույն 70 միավորը հասցվել է 80-ի:

ԲԻԶՆԵՍ

ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՏԱԼԻՍ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ

Վրաստանի գործարարների ասոցիացիան հավանություն է տալիս եկամտահարկի վերացման վերաբերյալ Վրաստանի կառավարության նախաձեռնությանը:

Ինչպես հայտարարեցին ասոցիացիայում, դեռեւս անցյալ տարվա սկզբից կազմակերպությունը ակտիվորեն աջակցում էր դիվիդենտների հարկի տոկոսադրույքի ավելացման հաշվին եկամտահարկի վերացումը: «Սույն նախաձեռնությունը նշանակալի է մի շարք պատճառներով, որից ցանկանում ենք առանձնացնել՝ ինչպես գործարարության, այնպես էլ պետության համար նշանակալի հարկային վարչարարության ծախսերի կրճատումը, հարկային վարչարարության վերացումը եւ, ամենակարեւորը, այդ նշանակալի ու դրական ուղերձը օտարերկրյա եւ տեղի ներդրողների համար: Բարեփոխումների իրականացումը պայմաններ են ստեղծում երկրի տնտեսական աճի համար եւ միջին ժամկետի ու երկարաժամկետ հեռանկարներ գործարարության համար: Եվ այդ ամենը մյուս գործոնների հետ մեկտեղ, դրական ազդեցություն կգործի գործարար միջավայրի եւ ներդրումային կլիմայի բարելավման ուղղությամբ»,- ասված է ասոցիացիայի տարածած հայտարարության մեջ:

ՀԵՌՈՒՍՏԱԵԹԵՐ

ԲԻՋԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ «20/30» ՆՈՐ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳԻՐԸ

Վրաստանի նախկին վարչապետ Բիձինա Իվանիշվիլին հեռուստահաղորդավար է դարձել GDS ժամանցային հեռուստալիքում, որը պատկանում է նրա որդուն՝ Բեքա Իվանիշվիլուն:

Բիձինա Իվանիշվիլին մարտի 15-ին հեռուստաեթերում ներկայացրեց «20/30» նոր վերլուծական ծրագիրը: Նախկին վարչապետի կարծիքով, անհրաժեշտ է կատարել «քաղաքական իրադարձությունների անաչառ վերլուծություն», քանի որ Վրաստանի մեդիատարածքում «խախտվել է տեղեկատվական բալանսը»:

«Եթե բնակչությունը ճիշտ եւ իրատեսորեն չգնահատի պետության հնարավորությունները եւ նրանից ավելին պահանջի, մենք կարող ենք այլ տիպի ծայրահեղության հասնել: Ես նկատի ունեմ այն, որ վերջին 22 տարվա ընթացքում մենք, ցավոք, չենք սովորել դասեր քաղել ուրիշների փորձից եւ ամեն ինչ փորձել ենք մեր մաշկի վրա՝ անցել քաղաքացիական պատերազմի բովով՝ ունենալով ավերված երկիր, կոռուպցիա, իսկ Սաակաշվիլու «Միասնական ազգային շարժում» կուսակցության իննամյա կառավարման պայմաններում անցել ենք իշխանության կողմից բնակչության նկատմամբ գործադրված բռնությունների միջով»,- հայտարարեց Իվանիշվիլին:

Նախկին վարչապետը հեռուստաեթերի ընթացքում խոստովանեց, որ Վրաստանի տնտեսությունը թուլացել է, եւ դրա վրա ազդում է Ուկրաինայի ճգնաժամը: «Բայց Վրաստանի տնտեսության մեջ չկա ոչ մի աղետ ու քաոս, ինչպես դա փորձում են ներկայացնել առանձին փորձագետներ եւ մի քանի հեռուստաընկերություններ: Մենք կփորձենք անաչառ վերլուծության միջոցով դա բացատրել բնակչությանը»,- ընդգծեց նա:



ՆԱԽԱԳԱՀԻ ԵԼՈՒՅԹԸ ՔՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ՀԵՏԱՁԳՎԵՑ ԵՐԿՈՒ ՇԱԲԱԹՈՎ

Վրաստանի խորհրդարանում երկրի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու ամենամյա ելույթը, որը պետք է կայանար անցած շաբաթ, հետաձգվել է մարտի 31-ին: Այդ մասին հայտնեց օրենսդիր մարմնի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին:

«Այսօր ես զրույց եմ ունեցել նախագահի հետ, եւ մենք եկանք համաձայնության, որ նախագահն ամենամյա հաշվետվությամբ խորհրդարանում հանդես կգա երկու շաբաթից՝ մարտի 31-ին: Ամսաթիվն ընտրել է նախագահը, եւ ես վաղօրոք համաձայնել եմ»,- հայտարարեց Դավիթ Ուսուփաշվիլին՝ խորհրդարանական բյուրոյի մարտի 16-ի նիստում:

Արդեն հայտնի է, որ Գիորգի Մարգվելաշվիլին իր տարեկան ուղերձում ուշադրությունը կենտրոնացնելու է երկրի արտաքին քաղաքականության վրա:

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ԵԶԴԻՆԵՐԻՆ՝ «ԿԼՈՉԵ ՍԱՐԵ ՍԱԼԻ» ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին եզդիներին շնորհավորել է «Կլոչե սարե սալի» առթիվ: Ուղերձում նախագահը նշում է. «Շնորհավորում եմ Վրաստանում ապրող եզդիներին՝ տոնի առթիվ: Այդ հինավուրց տոնը հանդիսանում է գարնանամուտի, նոր կյանքի, նոր տարվա խորհրդանիշը: Մաղթում եմ խաղաղություն եւ բարեկեցություն ձեր ընտանիքներին եւ ողջ երկրին»:

ԱՄՆ-Ն ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԿՈՒՆԵՆԱ ՆՈՐ ԴԵՍՊԱՆ

ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման արդեն հայտարարել է Վրաստանում նոր դեսպանի թեկնածուի անուն-ազգանունը: Սպիտակ տան տվյալներով, այդ պաշտոնը զբաղեցնելու է Յան Քելլին: «Նախագահ Օբաման հայտարարել է, որ ցանկանում է Վրաստանում դեսպանի պաշտոնում նշանակել Յան Քելլիին»,- ասված է Սպիտակ տան հայտարարության մեջ:

Յան Քելլին մինչ օրս զբաղեցրել է մի շարք բարձր պաշտոններ: Մասնավորապես, նա Միացյալ Նահանգները ներկայացնում էր ԵԱՀԿ-ում, միաժամանակ հանդիսանում էր ԱՄՆ պետդեպարտամենտի ռուսական վարչության ղեկավարը:

Նշենք, որ ԱՄՆ-ի Վրաստանում ներկայիս դեսպան Ռիչարդ Նորլանդի լիազորությունները սպառվում են ընթացիկ տարվա ամռանը: Նա Վրաստանում աշխատում էր 2012 թվականից:

ՆԱԽԿԻՆ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐԸ ԽՍՏԱՑՎՈՒՄ ԵՆ

Դատախազությունը խստացրել է պաշտպանության նախկին նախարար Դավիթ Կեզերաշվիլուն եւ Թբիլիսիի նախկին քաղաքապետ Գիգի Ուգուլավային ներկայացրած մեղադրանքները: Ինչպես հայտարարել են մեղադրյալների փաստաբանները, նոր մեղադրանքներն առնչվում են 2007 թվականի նոյեմբերի 7-ի ակցիայի ցրմանն ու «Իմեդի» հեռուստաընկերության փակմանը:

Այդ կապակցությամբ, Վրաստանի դատախազությունը հստակեցրել է նաեւ 2007 թվականի նոյեմբերի 7-ին Թբիլիսիում ցույցի ցրման գործով նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլու դեմ ներկայացրած մեղադրանքը:

Նշենք, որ մարտի 15-ին Թբիլիսիի քաղաքային դատարանը երկամյա նախնական կալանքի որոշում է ընդունել նախկին քաղաքապետ Գիգի Ուգուլավայի հարցով:

«ՈՒԺԵՂ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ, ՈՒԺԵՂ ՎՐԱՍՏԱՆ»

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ձեր հնարավորություններին եւ վստահ եմ, որ կներկայացնեք բազում նախաձեռնություններ, որոնք կիրականացվեն տարածաշրջանում: Մենք առավելագույնս կաջակցենք ձեզ՝ լինի դա գույքի խորհրդանշական գնով փոխանցում, ճանապարհ, ջուր, լուսավորություն կամ՝ այլ ենթակառույցային օբյեկտ: Ձեզ կներկայացվի առավելագույն օժանդակություն, պետության կողմից համաֆինանսավորում՝ ինչպես կենտրոնական, այնպես էլ տեղական մակարդակով: Մենք ունենք տարածաշրջաններում իրական փոփոխություններ սկսելու բացառիկ հնարավորություն: Եթե մենք տարածաշրջանները չզարգացնենք միայն քաղաքների զարգացմամբ, իրատեսական արդյունքի չենք հասնի»,- հայտարարեց Վրաստանի վարչապետը՝ դիմելով գործարարներին:

«Գլխավոր ուշադրությունը պետք է ուղղված լինի Վրաստանի տարածաշրջանների զարգացմանը, քանի որ ես եւ կառավարության անդամները համակարծիք ենք, որ, առանց ուժեղ տարածաշրջանների, հնարավոր չէ Վրաստանի գոյությունը: Հենց դրանից ելնելով՝ մենք նախաձեռնեցինք «Ուժեղ տարածաշրջան, ուժեղ Վրաստան» նախագիծը: Մեզ համար դա կլինի գլխավոր շարժիչ ուժը: Դա հետաքրքրական կլինի յուրաքանչյուր գործարարին: Եվ այժմ, երբ մենք սկսում ենք այս նախագիծը, կարծում ենք, որ այն եւս մեկ հետաքրքիր քայլ է, որը պետք է իրական օգուտ բերի»,- ընդգծեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Վարչապետը հիշեցրեց, որ այդ նախագծի պատրաստման աշխատանքն ինքը տնտեսական թիմին հանձնարարել էր մի քանի ամիս առաջ, եւ այսօր արդեն յուրաքանչյուր տարածաշրջանի համար պատրաստվել է առանձին ծրագիր: Նա նշեց, որ ամեն շաբաթ կներկայացվի կոնկրետ տարածաշրջանի գործողությունների ծրագիրը: Վարչապետի հանձնարարությամբ, կառավարությանն առընթեր տնտեսական խորհուրդը լրիվությամբ ուսումնասիրել է բոլոր տարածաշրջանների հնարավորությունները, բնական ռեսուրսները, տնտեսական ներուժը, մարդկային ռեսուրսները եւ կազմել մանրամասն պատկերը, թե ինչ է անհրաժեշտ յուրաքանչյուր տարածաշրջանի տնտեսական զարգացման համար: Նոր ծրագրի ներկայացման նպատակով, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին առաջինն այցելեց Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջան եւ հանդիպում ունեցավ տեղի գործարարների հետ:

ԻՆԽԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԸ

Իր խոսքում, Իրակլի Ղարիբաշվիլին ներկաներին հիշեցրեց այն իրականացված նախագծերի մասին, որոնք տարածաշրջանում կատարվել են վերջին երկու տարիների ընթացքում:

Դրանք են՝ Վրաստանի բոլոր քաղաքացիները ապահովագրվել են համընդհանուր առողջապահության նախագծով, ավարտվել է 82 նոր ամբուլատորիաների շինարարությունը, 150 լարիով ավելացվել եւ 650 լարիի է հասցվել գյուղական բժիշկների աշխատավարձը, մեկնարկել է «C» հեպատիտի դեմ պայքարի նախագիծը, բոլոր հիվանդների համար բուժումը կդառնա մատչելի, նվազագույն կենսաթոշակը դարձել է 150 լարի, կրկնապատկվել է սոցիալապես անպաշտպան բնակիչների ու բռնագաղթվածների նպաստը: Աշակերտներն անվճար ստացել են 1016700 կոմպլեկտ դասագրքեր, բարձրագույն կրթությունը 21 մասնագիտությունների ուղղությամբ դարձել է անվճար, լրիվությամբ ֆինանսավորվում է մասնագիտական ուսումնարանների 12 հազար ուսանողների ուսման վարձը, կառուցվել են 20 նոր ու վերանորոգվել 1000 դպրոցներ: Վեց տարածաշրջաններում յուրաքանչյուր երրորդ եւ հաջորդ զավակների համար տրվում է ամենամսյա օգնություն, լեռնային տարածքներում՝ 200, իսկ հարթավայրերում՝ 150 լարի: «Էլեկտրական հոսանք՝ բոլոր գյուղերին» պետական նախագծի շրջանակներում 2013 թվականից մինչ օրս էլեկտրիֆիկացվել է 22 գյուղ, 2013 թվականից մինչ օրս շահագործման է հանձնվել 8 հիդրոէլեկտրակայան, դրանց վրա ընդհանուր ներդրումը կազմել է 251 միլիոն ԱՄՆ դոլար: 13 տոկոսով ավելացվել է Վրաստանից ապրանքների արտահանումը: Եվրամիության շուկա արտահանվող վրացական ապրանքի ծավալը ավելացվել է 32 տոկոսով, իսկ Ռուսաստան՝ 153 տոկոսով: 2012, 2013, 2014 թվականներին, ընդհանուր առմամբ, Վրաստանի էկոնոմիկայում կատարվել է 3 միլիարդ 125 միլիոն ԱՄՆ դոլարի ներդրում: «Արտադրի'ր Վրաստանում» նախագծի շրջանակներում, Վրաստանի մասշտաբով արդեն ընդգրկված են 64 ընկերություններ, իսկ նախագծի ընդհանուր գումարը կազմում է 112 միլիոն ԱՄՆ դոլար: 2015 թվականի համար այդ նախագծով գործող արտադրություններում կաշխատի 4500 մարդ: Կառուցվել են 54 կիլոմետր ընդհանուր երկարությամբ ճանապարհներ, 19 նոր կամուրջներ, վերանորոգման աշխատանքներ են իրականացվել 554 կիլոմետր ճանապարհների եւ 87 կամրջի վրա, վերանորոգվել է 573 հիդրոտեխնիկական կառույց, մաքրման աշխատանքներ են իրականացվել 3 հազար կիլոմետր ոռոգման ջրանցքներում: Երկրի 35 մունիցիպալիտետներում ջրամատակարարման բարելավման նպատակով իրականացվել են 53 նախագծեր:

Սակավահող ֆերմերների գարնանային նախագծի շրջանակներում գյուղացիներին անվճար տրվել է 107605506 լարիի պարարտանյութ, 47853368 լարիի թունաքիմիկատներ, 8579187 լարիի սերմնանյութ, 53704193 լարիի գյուղատնտեսական գործիքներ, 232486 լարիի սարքավորումներ: Այդ ամենի արդյունքում, ընդհանուր առմամբ, հերքվել է 427765 հեկտար հողատարածք:

Արտոնյալ ագրովարկի շրջանակներում տրվել է 799324000 լարիի, ընդհանուր առմամբ 27713 վարկ, բացվել է 105 նոր արտադրություն, վերազինվել է՝ 580-ը: Գյուղատնտեսության ֆինանսավորված արտադրություններում ստեղծվել է ավելի քան 10 հազար նոր աշխատատեղ:

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում «Հզոր տարածաշրջաններ, հզոր Վրաստան» նոր նախագծի շնորհանդեսի շրջանակներում, Ասպինձա ավանում ներքին գործերի նախարար Վախթանգ Գոմելաուրու հետ մասնակցեց տարածաշրջանի հատուկ հանձնարարությունների գծով երկրամասային վարչության բացման արարողությանը:

ԵՐԵՔ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ՝ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻԻ ՀԱՄԱՐ

«Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանի ուսումնասիրությունից հետո, առանձնացվեցին երեք հիմնական ուղղություններ: Դրանք են գյուղատնտեսությունը, արդյունաբերությունը եւ զբոսաշրջությունը: Այդ երեք ուղղությունների զարգացումը կապահովի տարածաշրջանի առաջընթացը: Երկրամասում առկա են փոքր եւ միջին գործարարության զարգացման լավ հնարավորություններ: Հիանալի հեռանկարներ կան անտառանյութի վերամշակման, կահույքի արտադրության եւ բնական ռեսուրսների յուրացման ուղղությամբ: Որպես օրինակ կարելի է բերել Ախալցիխեի մահուդե արտադրությունը, Ախալդաբայի կահույքի ֆաբրիկան, Նինոծմինդայի կարի ֆաբրիկան եւ այլ հաստատություններ, որոնց վերականգնումը եւ գործարկումը կնպաստի տարածաշրջանի աշխուժացմանը եւ եկամտաբեր կլինի գործարարության համար: Բոլոր ներդրողներին, ովքեր կհետաքրքրվեն այդ արտադրություններով, անձամբ ես աջակցություն եմ խոստանում»,- Ախալցիխեում կայացած հանդիպմանը հայտարարեց վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին:

Իր խոսքում, կառավարության ղեկավարը ուշադրություն բեւեռեց տարածաշրջանի բացառիկ պատմամշակութային ժառանգության եւ առանձնակի աշխարհագրական դիրքի վրա, ինչը զբոսաշրջության զարգացման նշանակալի գործոնն է: Իրակլի Ղարիբաշվիլին համոզվածություն հայտնեց, որ նոր նախագծի հաջող իրականացումը կաշխուժացնի տարածաշրջանը, կնպաստի նոր աշխատատեղերի ստեղծմանը եւ տեղի բնակչության բարեկեցության բարձրացմանը:

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ, ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅՈՒՄ, ԱԽԱԼՑԻԽԵՈՒՄ, ԱՍՊԻՆՁԱՅՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՆԱԽԱԳԾԵՐԸ

Վրաստանի կառավարությունը 2012 թվականից մինչ օրս Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում նշանակալից մի շարք նախագծեր է իրականացրել: Մասնավորապես, տարածաշրջանում հաշվետու ժամանակահատվածում ավարտվել է 600 ենթակառույցային նախագծի իրականացումը: Այդ նախագծերի շնորհիվ ավարտվել են 93 ճանապարհի, 14 կամուրջի, ջրամատակարարման 142 օբյեկտի եւ ոռոգման համակարգի 35 օբյեկտի, կոյուղու չորս օբյեկտի եւ այլ նշանակության 157 օբյեկտի վերանորոգումները: 2015 թվականի համար ծրագրված է շուրջ 726 ենթակառույցային նախագծի իրականացում:

Գյուղատնտեսության ոլորտում տարածաշրջանում բացվել է հինգ նոր արտադրություն, 33 հաստատություններում ավարտվել է վերազինումը, աշխատանքի է տեղավորվել 345 մարդ: Տարածաշրջանի մունիցիպալիտետներում գործում են 94 գյուղատնտեսական կոոպերատիվներ: Երկրամասում գործում է գյուղատնտեսական մեխանիզացիայի սերվիս-կենտրոն՝ 70 միավոր գյուղատնտեսական տեխնիկայով: Տարածաշրջանում գործում են նաեւ անասունների հիվանդության ախտորոշման եւ կանխման լաբորատորիա, Վաչիանիի գիտահետազոտական կենտրոնը, պարենամթերքի ազգային գործակալության տարածաշրջանային կենտրոնը: 2013-2014թթ. տեղի ֆերմերներին հանձնվել է 526 գյուղատնտեսական քարտ:

Ինչ վերաբերում է կրթության ոլորտին, ապա հաշվետու ժամանակահատվածում վերանորոգվել է 60 հանրային դպրոց եւ Սամցխե-Ջավախեթիի պետական համալսարանի ուսանողական հանրակացարանը: Բնական գազով ապահովվել են տարածաշրջանի 40 հանրային դպրոցները: Բուղաշենում կառուցվել է նոր դպրոց: Վերանորոգման աշխատանքներն ավարտվել են երկրամասի 22 մանկապարտեզներում: Ներկայումս ընթացքի մեջ է 30 դպրոցի վերանորոգումը, շարունակվում է Արալ գյուղում նոր դպրոցի շինարարությունը: Երկրամասի տասնյակ դպրոցներում ընթացքի մեջ է բժշկական կաբինետների հանդերձավորման գործընթացը:

Երկրամասում նշանակալից փոփոխություններ են իրականացվել առողջապահության առումով: 2014 թվականին Սամցխե-Ջավախեթիին է փոխանցվել շտապ օգնության 14 նոր մեքենա, շահագործման է հանձնվել 6 նոր ամբուլատորիա: Երկրամասի մասշտաբով՝ համընդհանուր առողջապահության ապահովագրության պոլիս է տրվել 101304 մարդու: Ավելացվել է գյուղական 82 բժշկի եւ 141 բուժքրոջ աշխատավարձը: Երկրամասի մասշտաբով 3307 ընտանիքի սոցիալական օգնությունն ավելացվել է: Ճգնաժամային վիճակում գտնվող ընտանիքի երեխաներին նախատեսված օգնության ծրագրի շրջանակներում, Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում նման օգնություն է փոխանցվել 92 ընտանիքների:

Էներգետիկայի ոլորտում երկրամասի մասշտաբով անհատական էլեկտրահաշվիչներ է տեղադրվել 9897 աբոնենտի, բնական գազ է հասցվել 3520 աբոնենտի: Երկրամասում կառուցվող էլեկտրակայանների շինարարությունում աշխատանքով ապահովվել է ավելի քան հազար մարդ, որի 60 տոկոսը տեղացիներ են:

Վրաստանի արդարադատության նախարարության աջակցությամբ, Նինոծմինդայի մունիցիպալիտետի Փոկա գյուղում բացվել է հասարակական կենտրոն, բնակչությանը մատուցվում է ավելի քան 200 ծառայության տեսակ: 2016 թվականի համար նախարարությունը ծրագրում է Ախալքալաքիում բացել արդարադատության տուն: Վրաստանի վարչապետի նախաձեռնությամբ, տարածաշրջանում իրականացվել է մշակութային 29 տան վերանորոգումը, համապատասխան գույք հանձնվել նկարչական դպրոցներին, երաժշտական դպրոցներին, կինոցուցադրումների համար համապատասխան սարքավորումներ տրվել Ախալքալաքիին եւ Նինոծմինդային: Վարչապետի նախաձեռնությամբ, մշակվել է երկրամասում զբոսաշրջության զարգացման 2015-2017 թվականների գործողության ծրագիրը, որի համաձայն այդ ոլորտում ներդրվելու է շուրջ 30 միլիոն դոլար:

Տարածաշրջանում նշանակալից քայլեր են իրականացվել երկրամասի տնտեսական զարգացման ուղղությամբ: Ընթացքի մեջ է Կարս-Ախալքալաքի երկաթուղում մայրուղու շինարարությունը, Ախալքալաքի-Կարծախի հատվածում արդեն իրականացվել է փորձնական գնացքաշարի առաքումը եւ այլ նախագծեր: «Կրկին անգամ կոչ եմ անում ներգրավվել կառավարության կողմից ներկայացված նոր նախագծին, ավանդ ներդրեք տարածաշրջանի հզորացման գործում, ինչը մեր պետության հզորության նախապայմանն է: Ես հավատում եմ ձեր հայրենասիրությանը, ձեր հնարավորություններին եւ վստահ եմ, որ կներկայացնեք բազում նախաձեռնություններ, որոնք կիրականացվեն տարածաշրջանում: Մենք առավելագույնս կաջակցենք ձեզ՝ լինի դա գույքի խորհրդանշական գնով փոխանցում, ճանապարհ, ջուր, լուսավորություն կամ՝ այլ ենթակառույցային օբյեկտ: Ձեզ կներկայացվի առավելագույն օժանդակություն, պետության կողմից համաֆինանսավորում ինչպես կենտրոնական, այնպես էլ տեղական մակարդակով: Մենք ունենք տարածաշրջաններում իրական փոփոխություններ սկսելու բացառիկ հնարավորություն: Եթե մենք տարածաշրջանները չզարգացնենք միայն քաղաքների զարգացմամբ, իրատեսական արդյունքի չենք հասնի»,- հայտարարեց Վրաստանի վարչապետը՝ դիմելով գործարարներին:

«Գլխավոր ուշադրությունը պետք է ուղղված լինի Վրաստանի տարածաշրջանների զարգացմանը, քանի որ ես եւ կառավարության անդամները համակարծիք ենք, որ առանց ուժեղ տարածաշրջանների, հնարավոր չէ Վրաստանի գոյությունը: Հենց դրանից ելնելով՝ մենք նախաձեռնեցինք «Ուժեղ տարածաշրջան, ուժեղ Վրաստան» նախագիծը: Մեզ համար դա կլինի գլխավոր շարժիչ ուժը: Դա հետաքրքրական կլինի յուրաքանչյուր գործարարին: Եվ այժմ, երբ մենք սկսում ենք այս նախագիծը, կարծում ենք, որ այն եւս մեկ հետաքրքիր քայլ է, որը պետք է իրական օգուտ բերի»,- ընդգծեց Իրակլի Ղարիբաշվիլին: